ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Խոսքը 1920 թ. ապրիլին թուրք-ադրբեջանական այն գաղտնի պայմանագրի մասին է:

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած իրադարձությունները և դրանց հետ կապված թուրքական զորքերի արշավանքը դեպի Բաքու շրջադարձային նշանակություն ունեցան համաթրքության ու համիսլամության քարոզչության ուժեղացման և Հայոց ցեղասպանության քաղաքականությունը շարունակելու գործում, և որին միանում է նաև Մուսավաթ կուսակցությունն ու նորաստեղծ Ադրբեջանի պետությունը:

1918 թ. մայիսին Ադրբեջանի կառավարության և Մուսավաթ կուսակցության գործիչների՝ Գանձակում տեղի ունեցած գաղտնի խորհրդակցության ժամանակ մշակվեց հայերի կոտորածների ծրագիր: Այն իրականացվում էր Ադրբեջանի հայաբնակ շրջաններում ու քաղաքներում: Այդ նպատակով ներքին գործերի նախարար Բեհբութ խան Ջիվանշիրը համապատասխան գաղտնի հրաման էր իջեցրել հանրապետության քաղաքապետերին: Հրամանում կոչ էր արվում «սրբազան պատերազմ» մղել թուրքական ցեղերը միավորելու նպատակով, որի համար անհրաժեշտ էր նախևառաջ «բնաջնջել հայ ցեղը», քանի որ «հայերը խոչընդոտ են հանդիսանում դեպի Հնդկաստան ուղղված մեր քաղաքական ճանապարհի վրա: Անհրաժեշտ է ոչնչացնել հայերին՝ նրանց դիակների վրայով անցնել մեր նպատակներին հասնելու համար: Մի խնայեք ոչ ոքի և հավատարմորեն կատարեք ձեզ տրված հրահանգները» (Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 167):

Հրամանը կատարում էին Ադրբեջանի զինված ուժերը, թուրքական զորամասերը և թաթարական անկազմակերպ խմբերը:

Ադրբեջանի և Թուրքիայի համատեղ հակահայ գործունեությունը, Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի հայության դեմ ձեռնարկված միջոցառումները շուտով փոխադարձ գրավոր պայմանավորվածություն ստացան: Այդպիսի մի պայմանագիր, ընդ որում՝ գաղտնի, Օսմանյան Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետության միջև կնքվել է 1919 թ. հոկտեմբերի 29-ին, ստորագրությամբ առաջինի կողմից՝ լիազոր ներկայացուցիչ, ընդհանուր սպայակույտի զորաբաժնի գեներալ Ջեմալ փաշայի, իսկ երկրորդի կողմից՝ լիազոր ներկայացուցիչ գեներալ Մ. Քերիմովի: Պայմանագիրը տպագրվել է Երևանի «Հառաջ» թերթում 1920 թ. ապրիլի 3-ին:

1-ին հոդվածով Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ որևէ հարձակման կամ վտանգի դեպքում, որով վտանգ կառաջանար «Ադրբեջանի բնական սահմանների» նկատմամբ, Օսմանյան կառավարությունը ցույց էր տալու ռազմական օգնություն: 3-րդ հոդվածով «ստույգ վտանգի» դեպքում կողմերը միմյանց օգնության էին գալու: Դա կարող էր լինել նաև այն պարագայում, երբ «դրացի» կառավարությունը կվտանգեր մեկ կամ մյուս երկրին:

Օսմանյան կայսրությունը հանձն է առնում իրականացնել, ասված է 8-րդ հոդվածում, Ադրբեջանի Հանրապետության բանակի կազմակերպումը՝ այնտեղ ուղարկելով սպաներ ու զինվորական մարզիչներ, իսկ ադրբեջանական ստորադաս սպաները կարող են կատարելագործվել Թուրքիայում: Վերջինս (հոդված 9-րդ) Ադրբեջանին մատակարարելու էր հրացաններ, թնդանոթներ, ինքնաթիռներ ու ռազմամթերք: 10-րդ հոդվածի համաձայն՝ Ադրբեջանը պարտավորվում էր առանց Օսմանյան Թուրքիայի համաձայնության որևէ հարևան երկրի հետ ռազմական դաշինք չկնքել: Պայմանագիրը կնքվել էր մեկ տարի ժամկետով Բերա-Պալաս պանդոկում (Կոստանդնուպոլիս):

Մյուս պայմանագիրը, որի մասին նշվեց սկզբում, ստորագրվել է քեմալական Թուրքիայի և նույն մուսավաթական Ադրբեջանի միջև 1920 թ. ապրիլի 15-ին: Այն ձեռք էր բերվել հայկական բանակի հետախուզության կողմից և տեղ գտել «Զորքերի Հրամանատարության Շտաբի Հետախուզության բաժնի» 1920 թ. հուլիսի 6-ի N 20 «Ամփոփագրում»: Նշենք, որ տպագրվել է պայմանագրի միայն մի քանի հոդված, պետք է կարծել՝ ամենաէական մասը, որը բերում ենք ստորև.

«Սույն թվականի ապրիլի 15-ին Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրվել է նոր գաղտնի կոնվենցիա՝ ի փոփոխումն անցյալ տարվա նոյեմբերին ստորագրված պայմանագրի: Այդ կոնվենցիայի ամենահետաքրքիր կետերից են.

Հոդած 5. Հանրապետական կառավարությունը (Ադրբեջանի – Վլ.Ղ.) խոստանում է շարունակել օգնությունը՝ հասնելու համար ռազմական մերձեցմանը Խորհրդային կառավարության (Ռուսաստանի – Վլ.Ղ.) և «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի» (քեմալական Թուրքիա – Վլ.Ղ.) միջև: Անհրաժեշտության դեպքում նա ինքը (Ադրբեջանը – Վլ.Ղ.) կմտնի այդ մերձեցման (Միության) մեջ:

Հոդված 6. «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեն» մեկ ներկայացուցիչ կունենա Ադրբեջանի Հանրապետության կառավարությանը կից: Այդ ներկայացուցիչը

օժտված կլինի բոլոր լիազորություններով՝ գործերը վարելու և լուծելու համար պայմանավորվող կողմերի միջև գոյություն ունեցող բոլոր ռազմական, ֆինանսական ու այլ բնույթի հարցերը:

Հոդված 7. «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի» ներկայացուցչությունը կտրականապես խոստանում է, որ Ադրբեջանի վրա Հայաստանի հարձակման դեպքում, և Ադրբեջանը կտրականապես խոստանում է, որ արևելյան մարզերը Հայաստանին տրվելու ու միացվելու դեպքում երկու պայմանավորվող կողմերը կօգնեն միմյանց և կգործեն որպես մեկ միացյալ բանակ:

Հոդված 16. Խաղաղության խորհրդաժողովի կողմից Թուրքիայի արևելյան մարզերը Հայաստանին զիջելու դեպքում գործի կդրվեն այն որոշումները, որպիսիք հավանության կարժանանան պատվիրակների կողմից և կվերաբերվեն ներկայացուցչության ընդունած միջոցառումներին:

ա) Ադրբեջանի տարածքում ապրող քրդական ցեղերի միջոցով և այդ ցեղերի հետ կնքած պայմանագրի համաձայն հասնել Ադրբեջանի մաքրագործման ավարտի շուրջ կատարյալ համաձայնության:

Հանրապետական կառավարությունը համաձայնվում է թույլատրել հանգրվաններ կազմակերպել Ադրբեջանի տարածքում՝ դյուրացնելու մաքրագործման նպատակով Նուրի փաշայի ուժերի ազատ գործողությունները և համագործակցությունը: Նրանց մասնակցությունը մաքրագործմանը (ջարդերին) որոշված է (Զինվորական մինիստրության հրամանի § 16-ը պարզաբանել սպաներին ու զինվորներին)»:

Փաստաթուղթը ստորագրել են՝ ՀՀ զորքերի հրամանատարության շտաբի հետախուզության բաժանմունքի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Խան-Կոտուրսկին և օգնական Դոդոխյանը (փաստաթուղթը, տպագիր օրինակի ձևով, պահվում է Հայաստանի ազգային արխիվի 200 ֆոնդում):

Պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ